ՈՐ ՎԵՐԱԾՆՎԻ ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

## Իսկ աշխատավարձը՝

# Արցախի օգնության ֆոնդին

Ավերիչ երկրաշարժը ծանր հետքեր թողեց նաև Դիլիջանում, թեև մարդկային զոհեր չեղան։

Վթարային են դարձել ոչ քիչ թվով բնակելի, վարչական, անհատական տներ ու շենքեր, դպրոցական, ուսումնական հաստատությունների համալիրներ, մշակույթի, առողջապահական կենտր, արտադրական, արդյունաբերական ձեռնարկություններ։ Անօթևան մնաց 1500 ընտանիք։ Առողջարանային քաղաքն այսօր առավել, քան երբևէ, զգում է շինարար ձեռքերի կարիք։ Երկրաշարժի հետևանքները վերացնելու և քաղաքը վերակառուցելու գործին օգնելու նպատակով Դիլիջան է եկել Մոլդավիայի շինարարական մասնագիտացված շարասյունը։ Երևանի Դիլիջանշինտրեստի № 50 շինվարչության շինհրապարակներում ամառային արձակուրդներին աշխատեցին Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի լեռնամետալուրգիական, էլեկտրատեխնիկական ֆակուլտետների ուսանողները։ Արտավազդ Բաղդասարյանի ղեկավարած «Էրեբունի—1» ջոկատը աշխատում էր Եղիշե Շամախյանի անվան Նորակառույց թաղամասի տարածքում կառուցվող 40 բնակարանանոց շենքի շինարարությունում։

«Էրեբունի—2» ջոկատը օգնեց Կույբիշև գյուղի տարածքում կառուցվող քաղաքի մաքրման կայանի և մի շարք ավազանների շինարարության վրա աշխատող Վիգեն Աբրամյանի աշխղեկության շինարարներին։ Բնակելի շենքերի կառուցմանը մասնակցեցին «Էրեբունի—3» ջոկատի անդամները։ Ջոկատի հրամանատար Հայկ Աբրահամյանին երբ հարցրին, թե ե՞րբ է նախատեսված շենքը շահագործման հանձնել, պատասխանեց.

— Մինչև ընթացիկ տարվա վերջը, բայց տեղամասի շինարարները պարտավորվել են այն շահագործման հանձնել նոյեմբեր ամսին։

Թեև տղաները շինարարներ չէին, բայց այնպես աշխատեցին, որ գրեթե հետ չմնացին մասնագետ շինարարներից։ Նրանցից Վահե Առաքելյանը, Արմենակ Դալլաքյանը, Վրեժ Հայրապետյանը և մյուսները չզլացան կատարել այն, ինչ նրանց հանձնարարված էր։

Ուսանողական-շինարարական «Էրեբունի—4» ջոկատը ղեկավարում էր ֆակուլտետի սկզբնական կոմերիտական կազմակերպության քարտուղար, չորրորդ կուրսի ուսանող, բազմաթիվ հետաքրքիր նախաձեռնությունների ու գործերի հեղինակ Տիգրան Շահբազյանը։

Նրա ղեկավարած ջոկատը մաքրեց խրամուղիներում տեղադրված խողովակները խցանումներից։

Նրանք յուրաքանչյուրի երկու օրվա աշխատավարձը փոխանցեցին Արցախի օգնության 700777 ֆոնդին։

ՍՏԵՓԱՆ ՀՈՎԻՎՅԱՆ
Դիլիջան

# ...ՔՈՎ՝ ԱՄՈՒՐ, ...ՀՈԳՈՎ՝ ԱՐԻ



...է. հաճախ այսպես ...ին։ Մարդը երկու ...ջատար է եղել. իր ...ակի շրջանի Ջրա... ...երկել, ցանել, բերք ...հարազատ են հո... ...ւթյուն և ցելե... ...րջին, «Ներանց ...աները, կայերում ...որյա հացի ու... ...րումով քաղե տա-

րի առաջ նրա աշխատանքային գրքույկում նոր գրանցում է կատարվել. Կիրովականի միջշրջանային ջրմուղ-կոյուղու վարչության Սպիտակի տեղամաս։

Կան մարդիկ, որ դժվարությունների ժամանակ կանգնում են երկընտրանքի առաջ, հաճախ էլ հիասթափվում ու... լքում նախընտրած մասնագիտությունը։ Վոլոդյա Գասպարյանը այդպիսիներից չէ։ Կամքով ամուր է, հոգով՝ արի։ Նրա համար ևս մեծ փորձություն էր անցած տարվա դեկտեմբերի 7-ի տարերային աղետը։ Երկրաշարժի ժամանակ իր սայլակավոր մոտոցիկլետով Ջրաշեն—Սպիտակ ջրատարի տեղամասի ճանապարհին էր։ Իսկ թե ինչ էր տեղի ունեցել հարազատ ծննդավայրում՝ Սպիտակում, շրջանի մյուս գյուղերում, տեսավ հետո։ Ակնթարթում կատարվածից դեռ ուշքի չեկած, հիշեց քլորատունը, ուր այդ օրը հերթապահում էր աներորդին՝ Հովհաննեսը։

... Նեղ արահետներով մոտոցիկլետով ընթացող Վոլոդյան ասես ոչինչ չէր տեսնում։ Մի կերպ տեղ հասավ և մնաց ապշած՝ քլորատունը չկար... Հովհաննեսը զո՞հ դարձավ։ Դիմանալ էր պետք։ Հոգում կուտակված վիշտը բռունցք դարձավ, ու ասես կռահեց տեղի ունեցած արհավիրքի հետևանքները։ Մտքում թոռներն էին, ընտանիքի անդամները, հարազատները, ընկեր-բարեկամ-

# ...Վ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԷՐ ԱՂԵՏԸ

...ակցի մանչուկի նա- ...Գեորգիկի ծննդյան ...դիմերեի յոթը նշա- ...Սպիտակի ծննդա- ...րոպե առաջ իրենից ...դուրս եկած մոր՝ ...մայրական ճիչով... ...ը դեռ չմոռացված ...վերմակի փոխա- ...ծածկեց փլատա- ...ից ահից սեղմվող ...ին լսելի օգնության

...ընկերից հետո ա- ...ի դաժան գերությու-

նից, վնասվածքներ ստացած մորը տեղափոխեցին Էջմիածնի հիվանդանոց, սակայն յոթ օրական որդուն կորցնելու ցնցող փաստը հանգիստ չէր տալիս մորը։ Ամեն վայրկյան մտովի վերականգնում էր նորածնի դիմագծերը, չկորցնելով նորից տեսնելու հույսը։ Հույսն արդարացավ. զինվորականների օգնությամբ փլատակներից փրկվել և Կալինինոյի հիվանդանոցում ապաքինվել էր Գեորգիկը։ Փրկության ավետիսը Սեդային բերեցին հարազատները։

Մանկիկի փրկության լուրը տարածվեց ամենուր։ Բոլորի շուրթերից սուրբ երգման նման էին արտաբերվում երկրա-







Վաղ առավոտից մինչև ու[...] ...ն եռուզեռ է Սպիտակ քաղաքում։ Լավ գիտեն շինարարները՝ իրենց [...]ն անհամբերությամբ են սպասում տարերքի չար անակնկալից տուժ[...]իքները շատ են։
Սակայն հայաստանցի բա[...]ցին ուզբեկ և Վրաստանի Բոգդանովկայից եկած հայ շինարարները։
Լուսանկարները՝ ՀՈՎՀ. ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻ

1988